

## ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

14) Եկեղեցոյ հայրերը ինչպէ՞ս կը  
մեկնաբանեն Յիսուսի մկրտու-  
թեան դրուագը:

Սկիզբէն ի վեր Ս. Հոգին ջուրերու  
վրայ առանց կերպարանքի կը շրջէր  
յորինելու համար արարածներու  
տարրը, որուն նախանձող թշնամին  
ոտնակոխ ըրած էր: Այստեղ աղաւ-  
նակերպ հոգին արարածներուն ապա-  
կանութիւնը վերստին հրաշագործեց,  
յաւիտենապէս ծածկուած խորհուրդը  
ճանչցուց, յայտնելով երրորդութեան  
անձնաւորութիւնը...: Սկիզբէն ի վեր  
երկիրը ջրհեղեղի կորուստով կ'ապա-  
կանի, իսկ այստեղ մկրտութեան  
ջրհեղեղով կը կենդանանայ: Ոչ թէ  
արարածներու ընութեան ընկղմամբ,  
այլ՝ մեղքերու գործի ընկղմումով:

Այստեղ մարդկային սերունդի  
ջուրերուն մէջ թաղուիլը ապակա-  
նութիւն յառաջացուց, իսկ այստեղ  
ջուրերուն մէջ թաղուիլը նորոգուիլ է  
եւ կեանքի հաղորդութիւն:

Այստեղ շիշարեր աղաւնին  
բարկութենէն իջնելու լուր կ'աւետէր,  
այստեղ աղաւնիի նմանութիւնը  
կեանքի ապահովութեան եւ  
աստուածութեան հետ մշտնչենաւոր  
յարատեւութիւնը կ'աւետէ հօր  
ձայնով, որ որդիին սիրելիութիւնը  
կ'ապարարէ:

## ԱՊԱՆԴԱՒՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՐԵՐ

### ԲԱՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՍ ՊԱՏՄԱԿԱՆ 8-ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՋ ԳԱԼՈՒՍՏ

Որովհետեւ Տէրը ինք ազդարա-  
րութեան հրամանով, հրեշտակապե-  
տին ձայնով եւ Աստուծոյ փողով  
երկինքէն պիտի իջնէ եւ Քրիստոսով  
մեռածները նախ յարութիւն պիտի  
առնեն... Յետոյ մենք ալ, որ ողջ  
մնացած ենք՝ անոնցմով մէկտեղ  
պիտի յափշտակուինք ամպերով  
Տիրոջ առջեւ ելելու օդին մէջ եւ  
այնպէս յաւիտեան Տիրոջ հետ պիտի  
ըլլանք» (Ա. Թես. 4:14-16): Ահա թէ  
ինչու Յայտնութեան զիրքին սկզբնա-  
ւորութեան, Յովհաննէս առաքեալ  
Քրիստոսի վերահաս գալուստին  
համար կը գրէ: «Ահա ամպերով կու  
գայ. եւ ԱՄԷՆ ԱԶՔ ՊԻՏԻ ՏԵՄՆԻ  
ԶԱՆԻԿԱ» (Յայտ. 1:7):


### 9-ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Մեռելներու յարութեան մասին  
Եհովայի վկաներ չնաշխարհիկ նորու-  
թիւններ ունին:

ա. Կ'ըսեն, թէ երբ մեռելներու յա-  
րութեան ժամանակը գայ, մեռելները  
իրենց ներկայ մարմինով յարութիւն  
պիտի չառնեն, այլ՝ թէ այս մար-  
մինները ամբողջութեամբ պիտի փճա-  
նան եւ անոնց փոխարէն՝ յարութիւն  
առնողներուն նորաստեղծ մարմին մը  
պիտի տրուի...

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ թերքը ա-  
մէն Կիրակի կը բաժնուի մեր ժողո-  
վուրդին, Եկեղեցիներու բանկալին  
մօտ: Նաև՝ Facebook-ի վրայ փետուել  
«Jerak կամ ՃՐԱԳ», ապա  
սեղմել «Like»ը, կարդալու կամ ան-  
դամագրուելու համար:

ՀԱՍՑԵ.



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՏՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱՌՈՒԵՐՈՒՄ ԼՈՅ  
(Ս. 119.105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 22 ՅՈՒՆԻ 2018

ԹԻՒ 29

### ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒՏԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 5.1-10: Ա. Կր. 6.15-7.11:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒՏԱՐԱՆԸ ԸՆ ՄԱՏՁԵՈՒՍԻ 19.3-12

Փարիսեցիներ Յիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցու-  
ցին. «Իրաւունք ունի՞ մէկը որեւէ պատճառով իր կինը արձակելու»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքերուն մէջ, թէ  
Աստուած սկիզբէն արու եւ էզ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց. «Այս պատ-  
ճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ  
մարմին պիտի ըլլան»: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ՝ մէկ մարմին: Ուրեմն  
ունի մէկը թող չբաժնէ անոնք՝ որ Աստուած միացուց»:

Փարիսեցիները դարձեալ հարցուցին. «Հապա ի՞նչու Մովսէս օրէնք սահմա-  
նեց՝ բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»: Յիսուս պատասխանեց.  
«Մովսէս ձեր խստարտութեան պատճառով արտօնեց արձակել ձեր կիները,  
սակայն ստեղծագործութեան ժամանակ արձակելու խօսք չկար: Գիտցէք նաեւ,  
թէ ով որ իր կինը կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշ մը կ'առնէ՝  
շնուրին ըրած կ'ըլլայ եւ ով, որ արձակուած կինը կ'առնէ՝ ան ալ շնուրին ըրած  
կ'ըլլայ»:

Աշակերտները ըսին Յիսուսի. «Եթէ ամուսնութիւնը այդպէս դատապարտու-  
թեան պատճառ կրնայ ըլլալ այր մարդուն եւ կնոջ համար, աւելի լաւ է չամունա-  
նալ»:

Յիսուս ըսաւ. «Բայց ամէն մարդ չի կրնար առանց ամուսնութեան մնալ, այլ՝  
միայն անոնք, որոնց Աստուած կարդրութիւն տուած է: Որովհետեւ մարդիկ չեն  
ամուսնանար այն պարագաներուն, երբ ծնունդով ներքինի են կամ մարդոց կողմէ  
ներքինի եղած են եւ կամ իրենք զիրենք ներքինի դարձուցած են Աստուածոյ արքա-  
յութեան համար: Ով, որ կրնայ ընդունիլ իմ հաստատումն, թող կատարէ զայն»:

## ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳՐԻԳՈՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ,  
ՅՈՒՄԻԿ ՀԱՅՐԱՊԵՏ

### ԳՐԻԳՈՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վրդանէսի անդրանիկ որդին, Գրիգոր Լուսաւորիչի թռոնիկն է Գրիգորիսը, որ ըստ պատմութեան Խորենացւոյ, Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Թայտակարան նահանգի, կամ ըստ յետնագոյն վկայութեանց, վրաց եւ աղուանից: Իր դէմքը մեր Եկեղեցւոյ կողմէ դրացի հերթանու ազգերուն մէջ կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ կողմէ դրացի հերթանու ազգերուն մէջ քրիստոնութիւնը քարոզելու համար ի գործ դրուած ջանքը, որ յաճախ նահատակութիւններու ալ պատճառ դարձաւ: Կը պատմուի իրեն համար, թէ անարժան ցեղապետներու դէմ կշտամբող դիրք բռնած ըլլալուն համար, ծիու ազիին կապուելով քաշկրտուած է քարերու եւ բուփերու վրայէն, Կասպից ծովուն մօս Վատնեան դաշտին մէջ եւ այսպէս մեռած ու Փոքր Սիւնիքի Ամարաս աւանին մէջ թաղուած է իր սարկաւագներուն ձեռքով: Խոկ 5-րդ դարուն, աղուանից Վաչական քագաւորին օրով իր նշխարները գտնուած ըլլալով, անոնց վրայ Եկեղեցի մը շինուեցաւ Ս. Գրիգորիս անունով, 489-ին:

### ՅՈՒՄԻԿ ՀԱՅՐԱՊԵՏ

Վրբանէսի երկրորդ որդին, որ տղայ հասակին ամուսնացաւ Տիրան քագաւորի աղջկան հետ, եւ դեռ շատ երիտասարդ՝ կաթողիկոս դարձաւ: Ունեցաւ երկու զաւակներ՝ Պապ եւ Աքանագին: Զենադրութիւնը ընդունեցաւ Կեսարիոյ մէջ: Մեր Եկեղեցական պատմութեան մէջ Յուսիկ կը ներկայացնէ քաղաքական իշխանութեան դիմադրող կրօնական գիտակից ոյժը:

Ըստ Խորենացւոյ, Յուսիկի եւ Տիրանի հակառակութեան շարժառիքն եղած պիտի ըլլայ Յուլիանոս Ուրացողի պատկերը, զոր իբր թէ Տիրան կ'ուզէր Եկեղեցւոյ մէջ դնել, եւ զոր Յուսիկ մերժեց: Բայց որովհետեւ այս պարագան հաստատելու համար թուականի դժուարութիւններ կան աւելի հաւանական էր, որ Տիրանի ներքին կեանքին վերաբերմամբ խիստ գտնուած ըլլալուն համար բարկութիւնը գրգռեց Տիրանի, որ բրածեծ մահուամբ սպաննեց զայն 347-ին, Ծոփաց Բարսեղ քաղաքին մէջ, 52 տարեկանին: Թաղուեցաւ Դարանադեաց գաւառի Թարդան աւանին մէջ:

### ՀԱՅՈՒՄ ԱՐԱԿԱՆԻ ՔԱՄԻՒՆ

### Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ «ԽԱՎԱՎՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ»Ը, ՈՐ ՔԱՀԱՆԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՅԱՃԱԽ ԿԸ ԿՐԿՆԵ

Հետեւեալ իմաստը ունի. նախ՝ Զրիստոս իր ծնունդով երկինքի եւ երկրի միջեւ խաղաղութիւն հաստատեց, ինչպէս հրեշտակները երգեցին: Ապա՝ մկրտութենին ետք աշխարհին արքայութեան Աւետարանը սկսաւ քարոզել եւ Աստուծոյ հետ հաշտութեան ճանապարհը սկսաւ ուսուցանել: Ի վերջոյ, մատնութեան երեկոյին, առաքեալներուն աւանդեց ըսելով. «Խաղաղութիւն կը բողում ձեզի: Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի» (Յհ. 14.27), եւ քահանան Քրիստոսն առնելով խաղաղութիւնը, ժողովուրդին կու տայ:

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒ ԽՐԱՏՆԵՐԸ

### ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԼՍԷ ՄԵՐ ԱՂՕԹՔՆԵՐԸ, ԵԹԷ ԻՐ ԿԱՄՔԻՆ ՀԱՄԱՁՅՆ ԵՆ

1. Իրիկունը, առտուն ու կէսօրը պիտի գանգատիմ ու հառաչեմ: Անիկա պիտի լսէ իմ ձայնս: (Սաղմոս 55:17)

2. Զիս պիտի փնտուեք եւ գտնեք, ձեր բոլոր սրտով պիտի խնդրեք զիս ու ես ձեզի պիտի երեւիմ, կ'ըսէ Տէրը: (Եր. 29:13)

3. Արդարները կ'աղաղակեն եւ Տէրը կը լսէ ու իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնեք: (Սաղմոս 34:17)

4. Համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ այն վստահութեամբ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ: (Ս. Յովհաննու 5:14)

5. Խնդրեցեք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտուեցեք եւ պիտի գտնեք, բախեցեք եւ պիտի բացուի ձեզի: (Սատրէոս 7:7)

6. Եթէ այդպէս է կը նշանակէ, թէ անոնք որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին Օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազտաց մեղի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ Օրէնքը չի կրնար ընել մարդկային բնութեան տակ ըլլալուն պատճառով, Աստուծ իրագործեց՝ աշխարհ դրկելով իր Որդին...

**Ծարունակել կարդալ (Հոռմայեցիներու 8): Ամէն օր կարդանք Աստւածաշունչը եւ ունենանք Հոգեւոր սնունդ:**

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### ՍՈՒՐԵՐ ԱՌԱՆՑ ԱԿՆԿԱԼՈՒԹԵԱՆ

«Ի՞նչ օգուտ, եթէ բոլոր ինչքերս աղքատներուն տամ եւ նոյնիսկ մարմինս կրակի մատնեմ, եթէ սէր չունիմ՝ ոչինչով կ'օգտուիմ» (Ա. Կր. 13.3): Մարդիկ իրենք զիրենք զոհեն թէ իրենց ունեցածը զոհեն՝ ոչինչով կ'օգտուին, եթէ Յիսուսի հանդէալ սէրէ մղուած չէ, որ կ'ընեն այդ բոլորը: Ումանք առատ նուիրատուութիւններ կ'ընեն այն ակնկալութեամբ եւ յոյսով, որ անոնց փոխարէն պիտի ստանան դատաստանի օրը եւ պիտի փառաբանուին: Ան, որ կը նուիրէ անոր փոխարէնը առնելու յոյսով՝ ան ինքզինքն է որ սիրած կ'ըլլայ եւ ո՛չ թէ զՔրիստոս: Մենք որոշ բանի մը համար չէ, որ կը հրաժարինք որոշ բաններէ, այլ՝ Յիսուսի համար: Յիսուս նուէր չէ որ կը փնտուէ, այլ՝ նուիրում:

### ՆԵՂՈՒԹԵՆՔ ԵՏՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

Ով Տէր, քու սրտմտութիւնովդ զիս մի՛ յանդիմաններ եւ քու բարկութիւնովդ զիս մի՛ խրատեր:

Ով Տէր, ողորմէ՛ ինձի, վասն զի տկար եմ ես. զիս բժշկէ, ո՛վ Տէր, վասն զի ուսկորներս կը սարսափին: Եմ անձս ալ յիստ սարսափեցաւ. եւ դուն, ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ:

Դարձի՛ր, ո՛վ Տէր, փրկէ՛ իմ անձս, Քու ողորմութեանդ համար զիս ազատէ: Վասն զի մահուան մէջ ֆեզ յիշատակել չկայ: Գերեզմանին մէջ ո՞վ ֆեզի շնորհակալութիւն պիտի յայտնէ: Հառաչանք ընելէ յոգնեցայ: Ամէն գիշեր կը լուամ իմ անկողինս, արցունքներով կը թրչեմ իմ մահինս: Իմ աչքս մաշեցաւ տրտմութենին: **ՍՍՂՄԸՍ 6**